ՏԿԼՈՐ ՀԱԻԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գիւղը, ուր ես եմ ծնուել, գտնուում է Արարատ լերան դիմաց: Կարող եմ վստահեցնել ձեզ, որ Արարատն ամենագեղեցիկը մեր գիւղից է երեւում: Բայց այսօրուայ պատմութիւնս լերան մասին չէ, աւելին՝ տկլոր հաւերի:

Այնպէս որ մեր գիւղ գալուց երկու բանում կարող էք վստահ լինել. նախ կը հիանաք Արարատով, եւ կը տեսնէք ու կը լսէք գիւղի զուարճախօս մարդկանց ու նրանց պատմութիւնները:

Դե՛հ, ուրեմն գնացինք, բարեկա՛մ:

Սա մեր գիւղի կենտրոնն է՝ գիւղամէջը: Գիւղի ծերերը գիւղամիջի կշիռն են: Ծառերի տակ շարքով նստած, բեղերն են ոլորում, չիբուխ քաշում ու խօսում անցած-գնացած բաներից: Պապս էլ է այնտեղ: Շատ չմօտենանք, թէ չէ կը տեսնի, կը բարկանայ, որ դպրոցից յետոյ փոխանակ տուն գնալու, գիւղամիջում պարապ թափառում եմ: Ու ձեռնափայտով ցոյց կը տայ տան ճանապարհը...

Եկեղեցու փողոցով ներքեւ իջնենք ու թեքուենք աջ: Սա Մացոյենց տունն է: Հըրե՛ն, էն էլ Մացոն: Զբաղուած է ամենալուրջ ու պատասխանատու գործով. արաղ է քաշում: Գիւղացու համար ձմեռուայ պարզ նախապատրաստութիւն է եղածը: Մացոյի դէմքն օղու աստիճանը յանախակի որոշելու «անհրաժեշտ փորձերից», թերեւս աւելի նպատակայարմար է գրել՝ գիւղի կիզիչ արեւից, կարմրել է:

Եթէ յիշողութիւնս չի դաւաճանում, նրա հսկայական կարմիր քիթը բաւական աջ էր ծռուած: Նայենք: Այո՛, չեմ սխալուել: Կիսաճաղատ գլուխ, ուրախ աչքեր, հոգին էլ պարզ ու զուլալ՝ իր քաշած օղու նման, անշուշտ, մինչեւ որոշ աստիճան:

Արաղը ծորում է մանանայի պէս, արեւը զենիթում է, քանմէկ հաւ բակում քուջուջ են անում, կեանքը հրաշալի է...

Ջրջնած-աւլած բակեր, ծառի հով, նստարան, վրան էլ թաղի կնանիք գիւղի կայծակնային նորութիւնները արեւածաղկի սերմի հետ շրթում-թքում են: Թեմաները բազմազան են: «Լուրջ ու խնդրայարոյց» հարց է օրինակ, թէ Ամերիկան «ընչի՞ է քիթը խոթել Վիետնամ»:

–Ա՛յ աղջկերք, Վիետնամը մի կողմ, էս մեր Բրեժնեւի չանան ասում են պլաստիկ են դրել:

–Ապրի՛ արեւդ, պլաստիկ ա, շատ խօսալուց էլ թուլանում-կախւում ա: Պէտք ա միշտ ձգել:

–Տօ մենակ չանա՞ն: Տարիք կայ, բան կայ, տարիքդ որ եկաւ, ամէն բան էլ կը թուլանայ: Դու հա՛ ձգի...

–Կնանի՛ք, ինչ կ'ուզէք ասէք, բայց աշխարհի մէջ մեր Կարէն Դեմիրճեանից տեսքով-շնորհքով մարդ չկայ: Մեր գեղի կողմերն էլ չի գալիս, մի գնամ կու՛շտ նայեմ:

–Էս վերին թաղերում էլ «չոմալան» հիւանդութիւնն ա կպել հաւերին: Կոտորւում են խեղճ հեյուանները:

digitised by A.R.A.R.@

–Ա՛յ աղջի, ի՞նչ ես ասում, ունեմ-չունեմ քանմէկ հատ հաւ ունեմ: Մացոյիս ձուածեղը որ պակասեց, ինձի կը մորթի: Գնամ, հիմա պրծած կը լինի, սեղանը գցեմ:

Մացօն աւարտել էր օղու գործը, թերմածէ-փլուշը լցրել հողի մէջ իբրեւ պարարտանիւթ, օղին ամբարել, պահեստաւորել եւ, արդիւնքից գոհ, նստել ծխում ու նայում էր մայրամուտին:

–Ա՛յ կնիկ, ընչի՞ ուշացար:

–Մացո՛ ջան, խօսքով էի ընկել, հիմա հացը կը դնեմ:

Կերան: Պառկեցին քնելու:

–Էս տեղաշորն էլ էնքան սառն է որ:

–Տեղաշորը սառն է, մի քիչ մօտ արի: Բրեժնեւի չանան ա թուլացել, դու՞ ընչի ես հեռու պառկում...

–Ա՛յ կնիկ, Բրեժնեւի՞ն ընչի յիշեցիր էս գիշերուայ կէսին:

–Աղջկերքն էին ասում: Մէկ էլ ասում էին, որ վերին թաղերում «չոմալանը» հաւերին հնձում ա: Մերինների՞ն բան չլինի... Ես ամէն օրուայ ձուածեղը տեղը պահեմ, ոչ մի տեղդ էլ չի թուլանայ...

–Էլի գժուեց էս կնիկը...

Առաւօտեան Յասմիկը դուրս էր եկել բակ, ամէն օրուայ պէս ջրջնում-ալում էր: Մէկ էլ ի՛նչ...

–Մացո՛, զարթնի՛, տուններս քանդուե՛ց...

Քսանմէկ հաւ՝ սատկած-ընկած, որը հողամասում, որը բակի այս ու այն կողմում: Մարդ ու կին հարայ-հրոցից, լաց ու կոծից յետոյ որոշեցին, որ հաւերը տանեն թափեն առուն:

–Մացո՛, արի էս հաւերը փետրենք, չորս-հինգ հատ լաւ բարձ կը լինի:

–Ա՛յ կնիկ, ժլատութիւնդ բոնե՞ց, գիւղացիքին վրաներս խնդացնել էս տալու: Ո՞վ է տեսել սատկած հաւը փետրեն:

–Ախր, ասում էի աղջկայ օժիտի բարձերը սրանցով դուրս կը գար...

–Լաւ, ներս բեր մարդ-մուրդ չտեսնի:

Մացօն ու Յասմիկը մէկ-մէկ փետրահան արեցին, հաւերն էլ տարան լցրեցին առուի դոշը՝ շուն ու առնէտի բաժին:

Խաղաղ երեկոն էր իջել գիւղի վրայ: Հաճելի խշխշում էին բարդիները:

Մեր փլուշը ճաշակած, հարբած հաւերը, սթափուելով՝ կամաց-կամաց ուշքի են գալիս ու ետեւ-ետեւի, օրօրուելով դառնում դէպի տուն: Քսանմէկ տկլոր հաւ շորորալով, անառակ որդիների նման վերադառնում են «հայրենի օջախ»...

–Մացո՛, հաւերին քշի հաւաքուն, ամբողջ գեղով խայտառակ էղանք:

Այդ աղմուկ-աղաղակը, մերկ հաւերի շքերթը, կչկչոցն ու ղողոցը լսում է Մացոյենց հարեւան Վլվլ Կոլյան: Մականունից յայտնի է, որ արագախօս Կոլյայի համար գիւղով լուր տարածելը «սրբազան պարտա-

digitised by A.R.A.R.@

կանութիւն» է: Իմանալով եղելութիւնը եւ երդուելով, որ բերանը փակ կը պահի, Կոլյան հեծնում է իր հեծանիւը...

Կէս ժամից գիւղը ամենայն մանրամասնութիւններով ապահովուած էր Մացոյենց հաւերի փլուշ ուտելու, հարբելու, աղջկայ օժիտի համար փետրուելու եւ առուի ափից տկլոր վերադառնալու մասին:

Մացօն ու Յասմիկը մէկ ամիս գիւղամէջ չէին երեւում...

Սիրելի բարեկա՛մ, սա իմ պատմութիւնն էր մեր գիւղի ու գիւղացիների, մեր նիստ ու կացի եւ տկլոր հաւերի մասին: Հիմա Մացօն չկայ: Չկայ նաեւ Կոլյան: Յասմիկն էլ՝ էսօր-էգուց: Չկան գիւղամիջում կարգով նստած իմ պապերը. կարգով եկան-անցան: Կայ մեր գիւղը, նրա դիմաց Արարատ լեռը՝ մեր լացի ու ծիծաղի լուռ վկան...

Տար ինձ այստեղից, բարեկա՛մ, չէ որ մի քանի թաղ այն կողմ մեր տունն է, ուր տատս է նստած թթենու ստուերում, ուր ծնողներս են երիտասարդ, սեւահեր, ուր եղբայրներս են խաղում աւազի վրայ...

Տա՛ր ինձ այստեղից: Եթէ մի փոքր էլ մնամ, էլ ինձ չես գտնի գիւղի փոշոտ փողոցներում, էլ ինձ չես պոկի մեր տան թթենուց:

Գնամ, խրուեմ կեանքի կեղտի մէջ, քարշ տամ ապրելիք մի քանի օրս ու ետ դառնամ գիւղամիջում չիրուխ ծխող նախնիներիս, ձեռնափայտով մեր տան նամբան ցոյց տուող պապիս, կանաչ շալն ուսին գցած, թթի ծառի շուաքում նստած տատիս եւ քե՛զ, իմ հայրենի գիւղ ու մանկութիւն:

Ետ դառնամ ու հանգիստս գտնեմ ձե՛ր մէջ, ձեր թեւերի վրայ:

ԸՆԾԱՆՈՒԷՐ ԱԲՂ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@